ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 նոյեմբերի 2016 թվականի N 110 - Ա

ԳՈՒՅՔԻ ՀԱՆՁՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ և 1.17-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 16-ի N 834-Ա որոշման 5-րդ կետը, **որոշում եմ՝**

1. «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկից հետ վերցրված ու «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին ամրացված, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս քաղաքի Օրբելյանների 5/3 հասցեում գտնվող արյան փոխներարկման կայանի 146.84 քառ. մետր մակերեսով շենքի և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 0.018465 հեկտար մակերեսով հողամասի բաժնային մասի և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս քաղաքի Օրբելյանների 5/4 հասցեում գտնվող պոլիկլինիկայի շենքի 684.4 քառ. մետր մակերեսով տարածքի և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 0.09194 հեկտար մակերեսով հողամասի բաժնային մասի հանձնում կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Ասրյան Աշոտ -- աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ (հանձնաժողովի նախագահ),

Թադևոսյան Արմեն - մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ,

Մկրտչյան Տիգրան - աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջին կարգի մասնագետ,

Խաչատրյան Սաշիկ - << Գորիսի բժշկական կենտրոն>> ՓԲԸ տնօրեն,

Առաքելյան Արթուր- «Սյունիքի մարզային արյան փոխներարկման կայան» ՓԲԸ տնօրեն:

2. Հանձնաժողովին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել գույքի հանձման գործընթացը և արդյունքները ներկայացնել քննարկման:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Վ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2016թ. նոյեմբերի 10

Ք. Կապան